Սաղմոս Դաւթի, ՚ի ժամանակի զի հալածէր զնա աբիսողոմ որդի նր։ ՃԽԲ

Տէր լուր աղօթից իմոց. ունկն դիր խնդրուածոց իմոց ճշմարտութեամբ քով։
Լուր ինձ արդարութեամբ քով, և մի մտաներ ՚ի դատաստան ընդ ծառայի քում. զի ոչ արդարանայ առաջի քո ամ կենդանի։
Հալածեաց թշնամին զանձն իմ. խոնարհ արար յերկիր զկեանս իմ. և նստոյց զիս ՚ի խաւարի որպէս մեռեալ յաւիտենից։
Ձանձրացաւ յիս հոգի իմ. և սիրտ իմ խռովեցաւ յիս։
Յիշեցի զաւուրս զառաջինս. խորհեցայ յամ գործս քո. յարարածս ձեռաց քոց խորհեցայ, և համբարձի առ քեզ զձեռս իմ։
Անձն իմ որպէս երկիր ծարաւի է առ քեզ. վաղվաղակի լուր ինձ տէր, զի նուա



նուաղեցաւ յինէն հոգի իմ։
Մի դարձուցաներ զերեսս քո յինէն. նմանեցիմ այնոցիկ, ոյք իջանեն ՚ի գուբ։
Լսելի արա ինձ առաւօտու զողորմութիւն քո. զի ես ՚ի քեզ տր յուսացայ։
Յոյց ինձ ճանապարհ՝ յոր և գնացից. զի առ քեզ տր համբարձի զանձն իմ։
Փրկեա զիս ՚ի թշնամեաց իմոց տր. զի զքեզ ապաւէն ինձ արարի։
Ուսո ինձ առնել զկամս քո. զի դու ես ած իմ։
Հոգի քո բարի՝ առաջնորդեսցէ ինձ ՚ի յերկիր ուղիղ։
Վս անուան քո տր՝ կեցուսցես զիս, արդարութեամբ քով հանցես ՚ի նեղութէ զանձն իմ։
Ողորմութեամբ քով սատակեա զթշնամիս իմ. և կորո զամ նեղիչս անձին իմոյ, զի ես ծառայ քո եմ։

Սաղմոս դաւթի. առ գողիաթ։ ՃԽԳ

Օրհնեալ տր ած իմ. որ ուսոյց զձեռս իմ ՚ի պատերազմ, և զմատունս իմ ՚ի ճակատամարտ։
Ողորմութի իմ և ապաւէն իմ, օգնական իմ և փրկիչ իմ ապաւէն իմ, և ես յուսամ

սամ 'ի նա. ա՛ հնազանդ առնէ զժողովուրդս ընդ ինև։

Տէր՝ ո՞վ է մարդ՝ զի յայտնեցար դու նմա. կամ որդի մարդոյ՝ թէ համարիս ինչ զնա։

Մարդ նանրոյ նմանեցաւ. և աւուրք նր ոպ հովանի անցին։

Տէր խոնարհեցո զերկինս՝ և էջ. մերձեա 'ի լերինս՝ և ծխեսցին։

Փայլեա զփայլատակունս քո, և լուծեա զնս. առաքեա զնետս քո՝ և ցրուեա զնս։

Առաքեա զձեռն քո 'ի բարձանց, և փրկեա զիս 'ի ջրոց բազմաց, և 'ի ձեռաց որդւոց օտարաց։

Որոց բերանք իւրեանց խօսեցան ըղնանրութի. և աջ նց աջ է մեղաց։

Ած յօրհնութի նոր օրհնեցից զքեզ. տասնաղեաւ սաղմոսարանաւ սաղմոս ասացից քեզ։

Որ տացէ զփրկութի թագաւորաց մերոց. որ փրկելոց իցէ զԴաւիթ ծառայ իւր 'ի սրոյ չարէ։

Փրկեա զիս՝ և ապրեցո զիս 'ի ձեռաց որդւոց օտարաց։

Որոց բերանք իւրեանց խօսեցան ըղնանրութի. և աջ նց աջ է մեղաց։



Որոց

Որոց ուստերք իւրեանց որպէս նորատունկ հաստատուն են 'ի մանկութե իւրեանց. դստերք նց զարդարեալ՝ և պաճուճեալ 'ի նմանութի տաճարի։

Շտեմարանք նոցա լի են՝ և բղխեն 'ի միմեանս. խաշինք նոցա բազմածինք են՝ և բազմանան 'ի գնացս իւրեանց. և անդեայք նց պարարտք են։

Ոչ գոյ խրամատութի ցանկոյ նց. և ոչ աղաղակ 'ի հրապարակս նց։

Երանեցին ժողովրդեան՝ որոյ այս այսպէս է. նա երանի ժողովրդեն, որոյ տր ած է նց։

Օրհնութեց Սաղմոս Դաւթի։ ՃԽԴ

Բարձր առնեմ զքեզ ած իմ, և թագաւոր իմ. և օրհնեմ զանուն քո յաւիտեան՝ և յաւիտեանս յաւիտենից։

Զօրհանապազ օրհնեցից զքեզ. և գովեցից զանուն քո, յաւիտեան և յաւիտեանս յաւիտենից։

Մեծ է տր՝ և օրհնեալ է յոյժ. և մեծութե նր ոչ գոյ չափ։

Ազգք՝ և ազգք՝ գովեսցեն զգործս քո. և զզօրութիս քո պատմեսցեն։

Զմեծ վայելչութի փառաց սրբութե

քո



124

քո խօսեսցին . և զսքանչելիս քո պատ-
մեսցեն :
Զզօրութի ահի քո ասասցեն . և զմե-
ծութիս քո պատմեսցեն :
Զյիշատակ բազում քաղցրութե քո բղ-
խեսցեն . և արդարութբ քո ցնծասցեն :
Գթած ողորմած է տէր , երկայնամիտ
և բազումողորմ :
Քաղցր է տր առ ամն , և գթութի նր
'ի վր ամ արարածոց իւրոց :
Խոստովան եղիցին առ քեզ տէր՝ ամ
գործք քո . և սրբք քո օրհնեսցեն զքեզ :
Զփառս արքայութե քո ասասցեն , և
զզօրութիս քո պատմեսցեն :
Ծանուցանել որդւոց մարդկան զզօրութիս
քո . և զփառս մեծ վայելչութե ար-
քայութե քո :
Արքայութի քո արքայութի ամ յաւիտե-
նից . և տրութի քո ազգէ մինչև յազգ :
Հաւատարիմ է տէր յամ բանս իւր ,
և արդար է յամ գործս իւր :
Հաստատէ տր զամ գայթակղեալս . և
կանգնէ զամ գլորեալս :
Աչք ամցուն 'ի քեզ յուսան , և դու
տաս կերակուր նց 'ի ժամու :
Տաս դու նց և կերակրեն . բանաս ըղ-



ձեռն քո , և լցուցանես զամն քաղցրութբ
կամօք քովք :
Արդար է տր յամ ճանապարհս իւր .
և սրբ է յամ գործս իւր :
Մերձ է տր առ ամենեան , ոյք կարդան
առ նա . առ ամենեան՝ ոյք կարդան առ
նա ճշմարտութբ :
Զկամս երկիւղածաց իւրոց առնէ տր .
աղօթից նց լսէ՝ և կեցուցանէ զնս :
Պահէ տր զամենեան ոյք սիրեն զնա . և
զամ մեղաւորս սատակէ տր :
Զօրհնութիս տն խօսեսցի բերան իմ .
օրհնեսցէ ամ կենդանի զանուն սբ նր
յաւիտեան , և յաւիտեանս յաւիտենից :

Ալէլուիա . անգեայ և զաքարիայ :

ՃԽԵ

Օրհնեա՛ անձն իմ զտր . օրհնեցից
զտէր 'ի կեանս իմ . սաղմոս ասա-
ցից այ իմոյ՝ մինչև եմ ես :
Մի՛ յուսայք յիշխանս՝ յորդիս մարդ-
կան . զի ոչ գոյ փրկութի 'ի նս :
Ելցէ հոգի 'ի նոցանէ՝ և դարձցին
անդրէն 'ի հող . և յայնմ աւուր կորի-
ցեն ամ խորհուրդք նց :

Երանի ազգին՝ որոյ տր ած յակոբայ օգնական է նմա. և յոյս նր ՚ի տր ած է.

Որ արար զերկինս և զերկիր, զծով՝ և զամն որ է ՚ի նոսա.

Որ պահէ զճշմարտութի յաւիտեան. և առնէ իրաւունս զրկելոց.

Տայ հաց քաղցելոց. և արձակէ զկապեալս տր.

Տէր բանայ զաչս կուրաց. և կանգնէ զգլորեալս տր.

Տէր սիրէ զարդարս. տր պահէ զպանդուխտս. զորբս՝ և զայրիս ընդունի տէր. և զճանապարհս ամբարշտաց կորուսանէ.

Թագաւորեսցէ տր յաւիտեան, ած քո սիօն՝ ազգէ մինչև յազգ.

Ալէլուիա. անգեայ և զաքարիայ.

ՃԽԶ

Օրհնեցէք զտր՝ զի բարի է սաղմոս. այ մերում քաղցր եղիցի օրհնութի.

Շինէ զերուսաղէմ տր. և զցրուեալսն իսրայէլի ժողովէ.

Բժշկէ զբեկեալ սիրտս, և պատէ զամ վէրս նոցա.

Որ թուէ զբազմութի աստեղաց. և զամենն զնս յանուանս կոչէ.



Մեծ է տէր, և մեծ է զօրութի նր. իմաստութե նր ոչ գոյ թիւ.

Ընդունի զհեզս տր. և խոնարհ առնէ զամբարշտաւսն մինչև յերկիր.

Օրհնեցէք զած խոստովանութբ. սաղմոս ասացէք նմա օրհնութբ.

Որ զգեցոյց զերկինս ամպովք. և պատրաստ արար զանձրև իւր յերկիր.

Բուսոյց զխոտ ՚ի լերինս, և զդալարի՝ ՚ի ծառայութի մարդկան.

Որ տայ անասնոց կերակուր. ձագուց ագռաւուց՝ որք կարդան առ նա.

Ո՛չ թէ ընդ զօրութիս ձիոյ կամեցաւ տր. և ոչ ընդ իրանս առն հսկայի հաճեցաւ.

Այլ հաճեցաւ տէր ընդ երկիւղածս իւր. և ընդ այնոսիկ՝ որք յուսան յողորմութի նր.

Ալէլուիա. անգեայ և զաքարիայ.

ՃԽԷ

Գովեա երուսաղէմ զտէր.

Եւ օրհնեա զած քո սիօն.

Զի զօրացոյց զնիգս դրանց քոց, և օրհնեաց զորդիս քո ՚ի քեզ.

Որ եդ զսահմանս քո ՚ի խաղաղութի. պարարտութբ ցորենոյ լցոյց զքեզ.



Որա

Առաքէ զբան իւր յերկիր . վաղվաղ
ընթանան պատգամք նր ։
Որ տայ զձիւն որպ զասր , և զմէգ որպէս
փոշի ցանեաց ։
Արկանէ զսառն որպ պատառս . առաջի
ցրտոյ նր ո՞ կարէ կեալ ։
Առաքէ զբան իւր՝ և հալէ զնա . շնչես֊
ցեն հողմք՝ և գնասցեն ջուրք ։
Պատմէ զբան իւր յակոբայ , զարդա֊
րութի և զիրաւունս իսրայէլի ։
Ո՛չ այսպէս արար ամ ազգաց տէր . և
զդատաստանս իւր ո՛չ յայտնեաց նց ։

Աղօթք Ամբակումայ մարգարէի ։
Ամբակ . Գ .

Տէր զլուր քո լուայ՝ և երկեայ .
տէր՝ նայեցայ ՚ի գործս քո՝
և զարհուրեցայ ։
՚Ի մէջ երկուց կենդանեաց ծանիցիս
դու , ՚ի մերձենալ ամացն յայտնեսցիս ,
և ՚ի հասանել ժամանակին երևեսցիս ։
՚Ի խռովել անձին իմոյ՝ ՚ի ժամանակի
բարկութե , զողորմութի յիշեսցես ։
Ած ՚ի հարաւոյ եկեսցէ . և սբն ՚ի փա֊
րանու լեռնէ ։



Յայտնեսցեն երկինք զվայելչութի փառց
նր . և օրհնութե նր լցան տիեզերք ։
Լուսագայթք որպ ՚ի լուսոյ հատան ՚ի
նմանէ . և եղջիւրք ՚ի ձեռին նր գտան . և
անդ հաստատեցաւ զօրութի փառաց նր ։
Յերեսաց նորա ելցեն հարուածք . և
զհետ շաւղաց նորա երթիցեն մեծա֊
մեծք ՚ի թռչնոց ։
Եկաց՝ և չափեաց զերկիր . հայեցաւ և
դիտեաց զհեթանոսս ։
Լերինք հալեսցին , և անտառք վատնես֊
ցին . Ճանապարհք՝ որք ՚ի սկզբանէն
էին , կուրասցին . և ՚ի նմանէ դողասցի
ամ երկիր ։
Տեսի զբնակս քուշացւոց . խռովե֊
ցան բնակիչք վրանացն մադիամու ։
Միթէ ՚ի վր գետոց բարկասցի՞ս դու
տր . կամ սրտմտութի քո ՚ի վր գետոց .
կամ բարկութի քո ՚ի վր ծովու ։
Ելէր դու ՚ի կառս քո . հեծելութիդ քո
փրկութի եղև յելանելն քո ։
Զարթեաւ աղեղն քո . զնետս կապար֊
ճից քոց արբուցեր , զգետս ցրուեցեր .
զերկիր դողացուցեր՝ ՚ի սաստկութե
անձրևի , որք անցանեն ընդ սա ։
Ընդունդք աղաղակեցին մեծամբս . լյս

փայլման արեգականն արգելաւ, և ծա_
գումն լուսնին դադարեցաւ.
Որպէս 'ի նշոյլ սլաքաց քոց գնասցես, և
որպէս 'ի լոյս փայլատակման սրոյ քո.
Բարկութեամբ զարթիցես 'ի վերայ երկրի. և
դողութեամբ կասցես զհեթանոսս:
Ելեր 'ի փրկութիւն ժողովրդեան քո,
'ի փրկել զընտրեալս քո:
Նետաձիգ եղեր 'ի գլուխս մարդկան
ամբարտաւանից. մինչև յանդունդս
ծովու ընկղմեցան.
Խնդրեցեր զվրէժ զօրութեամբ քով 'ի զօ_
րագլխացն մեղաւորաց, որք յուսացեալ
էին յանդգնութիւն իւրեանց. զի կերին
զաղքատն 'ի գաղտնիս.
Արշաւեցեր 'ի վերայ ծովու զերիվարս քո,
և խռովեցան յաղթ ջուրք անդնդոց.
Կացի ես՝ և գելան աղիք իմ 'ի ձայնէ
բերանոյ իմոյ. եմուտ դողումն յոսկերս
իմ, և ես յանձն իմ խռովեցայ.
Զայս պահեսցես յաւուր նեղութեան.
ածել 'ի վերայ ազգի իմի, որք մարտնչին
ընդ ժողովրդեան քում.
Թզենի ոչ տացէ զպտուղ իւր, և յայգ_
ւոջ բեր մի գտցի. ձիթենիք սնասցին,
և երկիր մի՛ բուսուսցէ զդալարի:



Պա

Պակասեսցին հօտք 'ի ճարակաց. և ե_
զինք մի՛ գտցին առ մսուրս:
Ես 'ի Տէր յուսացայ. ցնծացայց՝ և ու_
րախ եղէց յԱստուծոյ փրկչէ իմ.
Տէր Տէր ես իմ զօրութիւն, և կացոյց զոտս
իմ 'ի հաստատութեան. 'ի վերայ պարանոցի
թշնամեաց կացոյց զիս. և հանդոյց զիս
երագ երագ:

Փառք Հօր և որ:

---

Մաղթանք.

Տէր մեր Տէր լուր մեզ, Աստուածային ողոր
մութեամբ և գթութեամբ քո խնայեա՛ յա_
րարածս քո.

Մարդասէր Տէր՝ վն սոր.

Զքարոզն և զաղօթս 'ի վերջն Ողորմեա կա_
նոնին գտցես 'ի 148 երեսն.

Ալէլուիա. Անգեայ և Զաքարեայ.

ՃԽԸ

Օրհնեցէք զՏէր յերկնից. օրհնե_
ցէք զնա 'ի բարձունս.
Օրհնեցէք զնա ամենայն հրեշտակք նորա. օրհ



նե

128

նեցէ՛ք զնա ամ՟ զօրութիւնք Տր՟ .
Օրհնեցէ՛ք զնա արեգակն՝ և լուսին . օրհնեցէ՛ք զնա ամ՟ աստեղք՝ և լոյս :
Օրհնեցէ՛ք զնա երկինք երկնից . և ջուրք որ ՚ի վերոյ քան զերկինս , օրհնեցէ՛ք զանուն Տն՟ :
Զի նա ասաց՝ և եղեն , հրամայեաց՝ և հաստատեցան :
Կացոյց զնս՟ յաւիտեանս յաւիտենից . սահման եդ՝ և ոչ անցանեն :
Օրհնեցէ՛ք զտէր յերկրէ՝ վիշապք և ամ՟ խորք .
Հուր և կարկուտ՝ ձիւն և սառն՝ հողմ և մրրիկք , որք առնեն զբան Տր՟ :
Լերինք՝ և ամ՟ բարձունք , ծառք պտղաբերք՝ և ամ՟ մայրք :
Գազանք՝ և ամ՟ անասունք . սողունք , և ամ՟ թռչունք թևաւորք :
Թագաւորք երկրի և զօրք իւրեանց . իշխանք և ամ՟ դատաւորք երկրի :
Երիտասարդք՝ և կուսանք , ծերք , և տղայք՝ օրհնեցէ՛ք զանուն Տն՟ :
Բարձրացաւ անուն Տր՟ միայն . խոստովանութի՟ նմա յերկինս և յերկրի :
Բարձր առնէ տր՟ զեղջիւր ժողովրդեան իւրոյ , օրհնութիւն նմա յամ՟ սրբոց Տր՟ . յորդւոցն իսրայէլի ժողովրդեան՝ որ մերձ է առ տէր :



Ալէլուիա . անգեայ և զաքարիայ .

ՃԽԹ

Օրհնեցէ՛ք զտր՟ յօրհնութի՟ ՚ի նոր . օրհնութի՟ նմա յեկեղեցիս սրբց՟ :
Ուրախասցի իսրայէլ յարարիչ իւր . որդիք սիոնի ցնծասցեն ՚ի թագաւորն իւրեանց :
Օրհնեսցեն զանուն Տր՟ օրհնութ՟բ . սաղմոսիւք և օրհնութ՟բ սաղմոս երգեսցեն նմա :
Հաճի տր՟ ընդ ժողովուրդ իւր սբ՟ . և բարձր առնէ զհեզս ՚ի փրկութ՟ն :
Պարծեսցին սրբքն փառօք՝ և ցնծասցեն ՚ի հանգիստ իւրեանց . և բարձր արասցեն զած՟ բերանօք իւրեանց :
Սուր երկսայրի եա ՚ի ձեռս նց՟ , առնուլ զհատուցումն ՚ի հեթանոսաց . ՚ի յանդիմանութի՟ ամ՟ ժողովրդոց :
՚Ի կապել զթագաւորս նց՟ կապանօք . զզօրաւորս նոցա ձեռնակապօք երկաթեօք :
Առնել նց՟ դատաստանս ըստ գրոց . և փառք այս են ամ՟ սրբց՟ Տր՟ :

Ալէլուիա · անգեայ և զաքարիայ ։

ՃԾ

Օրհնեցէ՛ք զԱստուած ՚ի սրբութեան իւրում · օրհնեցէ՛ք զնա ՚ի հաստատութեան ՚ի զօրութեան իւրում ։
Օրհնեցէ՛ք զնա ՚ի զօրութեան իւրում · օրհնեցէ՛ք զնա ՚ի բազում մեծութեան իւրում ։
Օրհնեցէ՛ք զնա ՚ի ձայն օրհնութեան · օրհնեցէ՛ք զնա սաղմոսիւք և օրհնութեամբ ։
Օրհնեցէ՛ք զնա ցնծութեամբ, գովեցէ՛ք զնա ուրախութեամբ ։
Օրհնեցէ՛ք զնա ՚ի բանս քաղցր · գովեցէ՛ք զնա ՚ի բարբառ լսելի ։
Օրհնեցէ՛ք զնա ՚ի ձայն գոհութեան · ամենայն հոգիք օրհնեցէ՛ք զՏէր ։

Ութ Կանոնն՝ 56 Գուբղայ է · 150 Փոխ է · և 2460 Տուն է ·

Այս սաղմոս ինքնագիր Դաւթի, արտաքոյ թուոյ ։ ՚Ի ժամանակի զի ել նա նահատակ ընդ դէմ գողիաթու, առաջի սաւուղայ, և ամենայն զօրացն իսրայէլի ։



Փոքր էի ես յեղբարս իմ, և կրտսեր ՚ի տան հօր իմոյ · արածէի զխաշինս հօր իմոյ ։
Ձեռք իմ արարին զսաղմոսարան · և մատունք իմ կազմեցին զգործի օրհնութեան ։
Իսկ արդ՝ ո՞ պատմեսցէ զայս տեառն իմում · ինքնին Տէր ամենայն լուիցէ զամ ։
Նա առաքեաց զհրեշտակ իւր · և համբարձ զիս ՚ի հօտէ խաշանց հօր իմոյ · և եօծ զիս յօծութեան իւղոյ իւրոյ ։
Եղբարք իմ մեծամեծք և գեղեցիկք · և ոչ հաճեցաւ ընդ նոսա Տէր ։
Ելի ես ընդ դէմ այլազգւոյն, և նզովեցի զկուռս նորա · հանի զսուսերն ՚ի նմանէ, և հատի զգլուխ նորին · և բարձի զնախատինս յորդւոցն իսրայէլի ·
Փառք հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ · այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից · Ամէն ։

## Օրհնութ՟ի Երից մանկանց։
Դան. Գ։

Օրհնեալ ես Տ՟ր Ա՟ծ հարցն մերոց. օրհնեալ փառաւորեալ անուն քո յաւիտեան։

Յիրաւունս անցուցեր զայս ա՟մ ընդ մեզ. արդար ես դու Տ՟ր, եւ ա՟մ գործք քո ճշմարիտ են։

Ճանապարհք քո ուղիղ են, եւ ա՟մ դատաստանք քո արդար են։

Դատաստան արդարութ՟ե ածեր ՚ի վ՟ր մեր ը՟ս ա՟մի, եւ զոր ինչ ածեր ՚ի վ՟ր մեր, եւ քաղաքի ս՟բյ հարցն մերոց Եէ՟մի։

Արդարութ՟բ եւ յիրաւի ածեր զայս ա՟մ ՚ի վ՟ր մեր՝ վ՟ս մեղաց մերոց։

Անօրինեցաք՝ եւ յանցեաք ապստամբ լինել ՚ի քէն. մեղաք յա՟մի՝ եւ պատուիրանաց քոց մեք ոչ անսացաք։

Ո՛չ պահեցաք եւ ոչ արարաք՝ ո՟րպ պատուիրեցեր դու մեզ, զի բարիս գտցուք մեք ՚ի քէն։

Արդ՝ զա՟մ զոր արարեր՝ եւ զոր ինչ ածեր ՚ի վ՟ր մեր, արդար դատաստանաւ արարեր։

Մատնեցեր զմեզ ՚ի ձեռս թշնամեաց մերոց. անօրինաց՝ խստաց եւ ապստամբողաց։



՚Ի ձեռս թագաւորի անօրինի եւ չարի քան զա՟մ երկիր, մատնեցեր զմեզ։

Եւ արդ՝ ոչ գոյ մեզ ժամ բանալ զբերանս մեր. զի ամօթ եւ նախատինք եղաք ծառայից քոց եւ պաշտօնէից։

Այլ մի՛ մատներ զմեզ իսպառ՝ վ՟ս անուան քո. մի՛ ցրեր զուխտս քո. եւ մի՛ ՚ի բացեայ առներ զողորմութ՟ի քո ՚ի մէնջ։

Վ՟ս աբրահամու սիրելւոյ քո, իսահակայ ծառայի քո, եւ իսրայէլի ս՟բյ քո։

Խոստացար նոցա՝ եւ ասացեր, բազմացուցից զզաւակ ձեր ո՟պ զաստեղս երկնից բազմութ՟բ. եւ ո՟պ զաւազ առ եզր ծովու։

Եւ արդ Տ՟ր՝ նուաղեցաք մեք քան զա՟մ ազգս. եւ եմք տառապեալ յա՟մ երկրի այսօր՝ վասն մեղաց մերոց։

Ո՛չ գոյ ՚ի ժամանակի յայսմիկ՝ իշխան մարգարէ եւ առաջնորդ. ոչ ողջակէզք պատարագաց, ոչ խունկք օրինաց, եւ ոչ տեղի պատարագս մատուցանելոյ առաջի քո. եւ զողորմութ՟ի գտանել ՚ի քէն։

Այլ անձամբք խոնարհեալ՝ եւ հոգւով տառապանաց, ընդունելի լիցուք մեք ո՟պ ողջակէզս խոյոց եւ զուարակաց, եւ ո՟պ բիւրաւորս գառանց պարարտաց։

Այնպէս ընդունելի լիցին պատարագք
մեր այսօր առաջի քո, զի կատարեսցուք
զկնի քո. և չիք ամօթ յուսացելոցն 'ի քեզ:
Եւ արդ՝ գամք զհետ քո ամ՟ սրտիւք մե-
րովք, երկնչիմք 'ի քէն, և խնդրեմք զե-
րեսս քո. տ՟ր մի՛ յամօթ առներ զմեզ.
Այլ արա՛ ընդ մեզ ըստ հեզութե՟ քում,
և ըստ բազում ողորմութե՟ քում. փրկեա՛
զմեզ վ՟ս սքանչելեաց քոց տ՟ր. և փա-
ռաւորեսցի անուն քո յաւիտեան:
Յամօթ լիցին ամ՟քեան, որք չարչարեն
զծառայս քո. ամաչեսցեն լիցին բռնութ՟ք
նց, և ամ՟ զօրութ՟ք նց խորտակեսցին:
Եւ ծանիցեն՝ զի դու ես տէր ած՟ մի-
այն, որ փառաւորեալդ ես 'ի վ՟ր ամ՟
տիեզերաց:
Օրհնեալ ես դու տ՟ր ած՟ հարցն մե-
րոց. գովեալ՝ և առաւել բարձ-
րացեալ յաւիտեան:
Եւ օրհնեալ է անուն ս՟բ փառաց քոց.
գովեալ և առա:
Օրհնեալ ես 'ի տաճարի փառաց սր-
բութե՟ քո. գովեալ և առա:
Օրհնեալ ես 'ի վ՟ր աթոռոյ արքայութե՟
քո. գովեալ և առա:
Օրհնեալ ես՝ որ նստիս 'ի քրովբէս՝ և

 հայիս

հայիս յանդունդս. գովեալ և առա:
Օրհնեալ ես 'ի վ՟ր հաստատութե՟ երկ-
նից. գովեալ և առա:
Օրհնեցէ՛ք ամ՟ գործք տ՟ն զտ՟ր. օրհ-
նեցէ՛ք և բարձր արարէ՛ք զնա յաւիտ՟ն:
Օրհնեցէ՛ք երկինք զտ՟ր. օրհնեցէ՛ք և
բարձր արա:
Օրհնեցէ՛ք հրեշտակք տ՟ն. և ջուրք որ
'ի վերոյ երկնից զտ՟ր. օրհ:
Օրհնեցէ՛ք զօրութ՟ք տ՟ն. արեգակն և
լուսին զտ՟ր. օրհ:
Օրհնեցէ՛ք աստեղք երկնից՝ անձրևք
և ցօղք զտ՟ր. օրհ:
Օրհնեցէ՛ք ամ՟ հողմք հուր և ջեր զտ՟ր:
Օրհնեցէ՛ք ցուրտ և տօթ, ցօղ և ձիւ-
նաբեր զտ՟ր. օրհ:
Օրհնեցէ՛ք սառն և պարզ, եղեամն և
ձիւն զտ՟ր. օրհ:
Օրհնեցէ՛ք տիւք և գիշերք, լոյս և
խաւար զտ՟ր. օրհ:
Օրհնեցէ՛ք ամպք և փայլատակունք՝ և
երկիր զտ՟ր. օրհ:
Օրհնեցէ՛ք լերինք բլուրք, և ամ՟ բոյսք
երկրի զտ՟ր. օրհ:
Օրհնեցէ՛ք աղբիւրք ծովք և գետք զ՟:
Օրհնեցէ՛ք կէտք և ամ՟ կայտառք, որ

 'ի

՚ի ջուրս, և Թռչունք երկնից զՏր. օրհ։

Օրհնեցէք գազանք և անասունք, և որդիք մարդկան զՏր. օրհ։

Օրհնեսցէ իսէլ զՏր. օրհնեսցէ և։

Օրհնեցէք քահանայք զՏր. օրհ։

Օրհնեցէք ծառայք Տն զՏր. օրհ։

Օրհնեցէք անձինք, և շունչք արդարոց զՏր. օրհնեցէք և բար։

Օրհնեցէք Սբք՝ և խոնարհք սրտիւք զ։

Օրհնեցէք Անանիա Ազարիա և Միսայէլ զՏր. օրհ։

---

Օրհնութի Մարիամու Ածածնին։
Ձայն. Է։

Մեծացուսցէ անձն իմ զՏր. և ցնծասցէ հոգի իմ յԱստուծով փրկչաւ իմով։

Զի հայեցաւ ՚ի վր խոնարհութե աղախնոյ իւրոյ. այսուհետև երանեսցեն ինձ ամ ազգք։

Զի արար ընդ իս մեծամեծս Հզօրն. և Սբ է անուն նորա։

Ողորմութի արար ազգաց յազգս երկիւղածաց իւրոց. արար զօրութի բազկաւ իւրով։

Ցրուեաց զամբարտաւանս ՚ի միտս սրտից.



տից. և քակեաց զհզօրս յաթոռոց։

Զխոնարհս բարձրացոյց, զկարօտս ելից բարութե. և զմեծատունս արձակեաց ունայնս։

Պաշտպանեաց Իսրլի ծառայի իւրոյ, յիշելով զողորմութի իւր։

Որպէս խօսեցաւ առ հարսն մեր, ընդ Աբրահամու, և զաւակի նր յաւիտեան։

Օրհնութի զաքարիայի հօրն Յովհաննու մկրտչի։
Ձայն. Է։

Օրհնեալ Տր Այ Իսրլի, որ յայց ել. և արար փրկութի ժողովրդեան իւրոյ։

Յարոյց մեզ եղջիւր փրկութե ՚ի տանէ Դաւթի ծառայի իւրոյ. որպէս խօսեցաւ բերանով Սրբոց որք յաւիտենից մարգարէքն էին։

Փրկութի ՚ի թշնամեաց մերոց, և ՚ի ձեռաց ամ ատելեաց մերոց։

Առնել ողորմութի առ հարսն մեր, և յիշել զկտակարանս սրբութե իւրոյ։

Զերդումն՝ զոր երդուաւ Աբրահամու հօր մերոյ, տալ մեզ առանց երկիւղի զփրկութի ՚ի թշնամեաց մերոց։

Պաշտել զնա սրբութբ և արդարութբ առաջի նր, զամ աւուրս կենաց մերոց։

Եւ դու մանուկ՝ մարգարէ բարձրելոյն կոչեսջիր. գնասցես առաջի տն՝ պատրաստել զճանապարհս նր։

Տալ զգիտութիւն փրկութեան ժողովրդեան նորա. 'ի թողութիւն տմ մեղաց մերոց.

Վն գթոյ ողորմութեն տն այ մերոյ, որով երևեցաւ մեզ արեգակն 'ի բարձանց, լուսաւոր առնել զխաւար մեր։

Երևել լոյս 'ի վր այսոցիկ, որ նստէաք 'ի խաւարի, և 'ի ստուերս մահու. ուղղել զոտս մեր 'ի ճանապարհս խաղաղութեան։

Աղօթք Սիմէոնի ծերունւոյն. Ղուկ. Բ.

Արդ արձակեա զծառայս քո տր՝ ըստ բանի քում 'ի խաղաղութիւն. զի տեսին աչք իմ զփրկութիւն քո, զոր պատրաստեցեր առաջի ամ ժողովրդոց։

Լոյս յայտնեցալ հեթանոսաց, և փառք ժողովրդեան քում իէլի։

Աղօթք Մանասէի թագաւորին։

Տէր ամենակալ ած աբրահամու՝ իսահակայ՝ յակոբայ՝ և զաւակի նց արդարոց. ամենակալ տր՝ թող զմեղս իմ։

Որ



Որ արարեր զերկինս՝ և զերկիր, և զամ զարդ նոցա. ամենա։

Որ կապեցեր զծով բանիւ հրամանի քո. փակեցեր զխորս, կնքեցեր ահաւոր և փառաւորեալ անուամբ քով. ամե։

Որ ամ ինչ սարսի և դողայ յերեսաց ահի զօրութե քո. ամենա։

Անբաւ է մեծ վայելչութի փառաց սրբութե քո. սաստիկ է բարկութի սպառնալեաց քոց 'ի վր մեղաւորաց. անչափ և անքննելին են ողորմութիք աւետեաց քոց. ամենա։

Դու տր բարձրեալ՝ գթած, երկայնամիտ, բազումողորմ. և զղջանաս 'ի վր չարեաց մարդկան. ամենա։

Դու ած՝ ոչ եդեր ապաշխարութի վր արդարոցն՝ աբրահամու իսահակայ և յակոբայ, որք ոչ մեղան քեզ. ա։

Այլ եդեր ապաշխարութի վր իմ մեղաւորիս. զի մեղայ աւելի քան զաւազ ծովու, և բազմացան անօրէնութիք իմ. ա։

Չեմ արժանի հայել՝ և տեսանել ըզ բարձրութիս երկնից, 'ի բազմութէ անօրէնութե իմոյ. ամե։

Կորացեալ եմ ես 'ի բռնութէ կապանաց երկաթից. և ոչ գոյ ինձ հանգիստ. ա։

Բար

Բարձացուցի զտրտմութի, և զչար առա
ջի քո արարի · կանգնեցի պատկեր՝ և
բազմացուցի զցասումն · ամէ։

Եւ արդ տէր՝ խոնարհեցուցանեմ ըզ
ծունր սրտի իմոյ, և հայցեմ 'ի քաղց
րութե քումմէ · ամէն։

Մեղայ՝ տր մեղայ, և զանօրէնութի իմ
ես ինձէն գիտեմ · ամէն։

Աղաչեմ և խնդրեմ 'ի քէն՝ թող ինձ տր,
թող ինձ · և մի՛ կորուսաներ զիս ըստ
անօրէնութե իմոյ · ամէն։

Մի՛ յաւիտեան բարկանար ինձ տր, և մի՛
յիշեր զչարիսն իմ, և մի՛ պարտաւորեր զիս
ընդ իջեալսն 'ի ներքոյ երկրի չարեօք · ա։

Զի դու տր՝ տր ապաշխարողաց ես ·
և յիս ցոյց զբարերարութիւն քո, որ ան
արժան եմ · ամէն։

Կեցուսցես զիս ըստ բազում ողորմութե
քում · և ես օրհնեցից զքեզ զամ ա
ւուրս կենաց իմոց · ամէն։

Զքեզ տր՝ օրհնեն ամ զաւարթունք երկ
նից · և քո են փառք յաւիտեանս · ամէն։

Փառք հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ ·
այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտե
նից · ամէն։



Աղաչեմ և խնդրեմ 'ի քէն տր · թող
ինձ զմեղս իմ։

Բազումողորմ տր, ողորմեա ինձ։

Ած՝ քաւեա զիս զմեղաւորս 'ի մեղաց,
և կեցո։

Արարիչ իմ և յոյս ած, գթա յիս 'ի
մեղուցեալ ծառայս · և ողորմեա ինձ
բազմամեղիս։

Ամենօրհնեալ սրբուհի՝ և միշտ կոյս
ածածին մարիամ · բարեխօսեա առ տր
վն իմ մեղաւորիս։

Ամենայն սրբք այ՝ բարեխօսեցէք առ
հայր 'ի յերկինս վն մեր մեղաւորացս։

Քս որդի այ անոխակալ, ընկալ զաղա
չանս մեր · զի 'ի քեզ են ապաւինեալ
անձինք մեր։

Յաղթօղ զօրութբ՝ սբ և կենդանա
րար՝ և պատուական խաչիւ քո տէր՝
պահպանեա զմեզ։

Առաքեա տր զհրեշտակ խաղաղութե
քո · որ եկեալ պահեսցէ զմեզ անխռով
'ի տուէ և 'ի գիշերի։

Եւ մարդասիրութբ քով յիշեա զմեզ
տր՝ յիշեա զմեզ, յորժամ գաս արքայ
ութբ քով, և ողորմեա մեզ։

Նախադրութիւնք խրատականք յաղագս աղօթից, զոր արարեալ է Տ̃ն Ներսեսի եղբօրն Գրիգորիսի հայոց կաթողիկոսի։

Աղօթք հասարակաց քրիստոնէից մեծաց և փոքունց, զոր պարտին ուսանիլ ա̃մք՝ և ուսուցանել զմիմեանս. քհ̃նայք զժողովուրդս, հարք զորդիս, մարք զդստերս, և ընկեր զընկերն իւր։ Եւ աղօթեսցեն սովաւ յաւուրն հինգ անգամ՝ երկրատասան ծնրադրութ̃բ ՚ի ժամուն. այսինքն՝ յառաւօտուն, ՚ի ճաշուն, ՚ի հասարակ աւուրն, յերեկոյին, և ՚ի հանգստեան։ Ապա թէ պղերգ ոք լինիցի և ծուլանայ զհինգ ժամ աղօթս կատարել, աղօթեսցէ չորս անգամ, կամ երեք անգամ, կամ երկու անգամ, կամ մի անգամ յաւուրն. որ միայն ճանաչի թէ քրիստոնեայ է, և զինքն ծանիցէ թէ արարած եմ Ա̃յ և երկրպագու Նր̃։ Եւ թէ զա̃մ բանս աղօթիցս հեղգայ ուսանիլ, (որք և զա̃նյական երգս բազումս փութով ուսանին,) ուսցի զկէս մի, կամ այլ նուազ. զի թէ տունս երիս ուսանիցին ՚ի սմանէ, և աղօթեսցեն երիս ծնրադրութ̃բ ՚ի ժամուն, ընդունելի՛ է առա



առաջի Ա̃յ։ Ապա թէ ոք ՚ի քրիստոնէից անփոյթ առնէ զսա յուսանելոյ և յաղօթելոյ, յանդիմանեսցի և՚ի մոլար ժողովոյն այլազգեաց. որք զաղօթսն զոր ուսեալ են, ՚ի պատերազմունս անգամ ոչ խափանեն՝ թո՛ղ թէ ՚ի խաղաղութ̃։ Իսկ մեր ժողովուրդք արտաքոյ աղօթից տեղւոյ բնաւ ոչ յիշեն զանունն Ա̃յ. զի ոչ ունին փոյթ ՚ի կարգս աղօթից որո̃ զա̃ծապաշտս, այլ սիրեն զդատարկաբանութի̃ քան զաղօթս։ Եւ թէ երբեմն գան ոմանք յաղօթել առ քահանայն, կամ փակեալ բերանով կանգնին, կամ զրուցատրութի̃ս առնեն ընդ միմեանս. զի ոչ ինքեանք գիտեն բանս աղօթից, և ոչ քհ̃նայից միտ դնեն սաղմոսաց և պաշտամանց։ Արդ ՚ի այսր պատճառի արարաք զաղօթս զայս պարզ և յստակ բառիւ վ̃ տխմարաց դիւրահաս լինելոյ. որ է սակաւ ըստ բանից՝ տունս քսան և չորս, ըստ ժամուց տունջեան և գիշերոյ, և ըստ թուոց ՚ի̃ց մարգարէիցն, և զօրաւոր ըստ մտաց, զի զյորովագոյն պէտս խնդրուածոց մերոց որ յԱ̃յ՝ ունի յինքեան. և տուաք ժողովրդեան մերում յուսումն. զի ա̃մ անձն քրիստոնէի ուս



ցի

ցի զսա · և ուր հանդիպեսցին 'ի ժամ աղօթիցն, խօսեսցին սովաւ ընդ այ · թէ յեկեղեցի, թէ 'ի տան, թէ յանդի, թէ 'ի գործ ինչ, թէ 'ի ճանապարհի։ Եւ որք ուսանին զսա և աղօթեսցեն մտադրութբ՝ ջերմեռանդ սրտիւ և արտասուօք, ամ խնդրուածք որ գրեալ են 'ի սմա, կատարեսցին 'ի կենդանութե և յետ մահու։ Իսկ որք արհամարհեն և ոչ ուսանին և ոչ աղօթեսցեն, ինքեանք տեսցեն զվնաս անձանց իւրեանց · մեք հատաք 'ի մէնջ զպատճառն՝ առնելով զաղօթս զայս · զի մի' այլ ևս պատճառեսցեն թէ ոչ գիտեմք բանս աղօթից, վն այնորիկ ոչ կամք յաղօթս։ Բայց ծանիցեն այնպիսիքն, թէ սմնայ ոչ այնչափ ջանայ զ[illegible] բարեգործութիս մեր խափանել որչափ զաղօթս · զի գիտէ որ յաղօթիցն միայն՝ ինքն հալածի 'ի մէնջ, և ած բնակէ 'ի մեզ։ Արդ՝ մեք աղաչեսցուք զբարերարն ած բանալ զաչս մտաց ձերոց, յօժարութբ ուսանիլ զսա և

աղօթել, և այ սիրելի լինել։

Եւ յաղօթելն, զԳրիգորիս կաթուղիկոս հայոց, և զեղբայրն նորին զՆերսէս զաղօթիցս յօրինօղն յիշեցէք 'ի քս։



Եւ

Եւ որք ընդ օրինակէք 'ի գիրս զաղօթս, գրեցէք և զխրատական բանս զայսոսիկ · և որք գրեն զսա՝ գրեսցին 'ի դպրութի կենացն յաւիտենից։ Եւ որք ուսանին և աղօթեսցեն, ողորմութի ընկալցին 'ի քէ · և որք ուսուցանիցեն զընկերս, վարձս առցեն յայ։ Եւ որք գրենն, մի' առաւել քան զօրինակն՝ բան կամ գիր խառնեսցեն, և մի' նուազ գրեսցեն, զի մի' այլ և այլ լինիցին բանքն, այլ հաւասար լիցին ամքն ուր և գրեսցին։ Եւ ուլխմարքն 'ի գիրս՝ ուղիղ գրողացն տացեն գրել · և քն փառք յաւիտեանս, ամէն։

---

Աղօթք իւրաքանչիւր անձին հաւատացելոց 'ի քս։ Զոր արարեալ է սրբյ տն Ներսեսի հայոց կաթուղիկոսի։

Հաւատով խոստովանիմ, և երկիրպագանեմ քեզ, հայր և որդի՝ և սբ հոգի · անեղ և անմահ բնութի, արարիչ հրեշտակաց և մարդկան և ամ եղելոց · ողորմեա' քո արարածոց, և ինձ բազմամեղիս։

Հաւատով խոստովանիմ, և երկիրպագանեմ քեզ՝ անբաժանելի լոյս, միա_



նա

նական ըն̄ երրորդութե̄ն և մի ա̄ծութե̄ն,
արարիչ լուսոյ՝ և հալածիչ խաւարի.
հալածեա՛ ՚ի հոգւոյ իմմէ զխաւար մե-
ղաց և անգիտութե̄. և լուսաւորեա՛ զմիտս
իմ ՚ի ժամուս յայսմիկ՝ աղօթել քեզ ՚ի
հաճոյս, և ընդունել ՚ի քէն զխնդրու-
ածս իմ. և ողորմեա՛ ինձ բազմամեղիս:
Հա՛յր երկնաւոր ա̄ծ ճշմարիտ, որ առա-
քեցեր զորդին քո սիրելի ՚ի խնդիր մո-
լորեալ ոչխարին. մեղայ յերկինս և ա-
ռաջի քո. ընկա՛լ զիս ո̄պ զանառակ որ-
դին, և զգեցո՛ ինձ զպատմուճանն զա-
ռաջին՝ զոր մերկացայ մեղօք. և ողոր:
Որդի՛ ա̄յ ա̄ծ ճշմարիտ, որ խոնարհեցար
՚ի հայրական ծոցոյ՝ և առեր մարմին ՚ի
ս̄բյ կուսէն մարիամայ, վ̄ն մերոյ փր-
կութե̄. խաչեցար՝ և թաղեցար՝ և յար-
եար ՚ի մեռելոց՝ և համբարձար փառօք
առ հայր. մեղայ յերկինս և առաջի քո.
յիշեա՛ զիս ո̄պ զաւազակն՝ յորժամ գաս
արքայութե̄ քով. և ողոր:
Հոգի՛ ա̄յ ա̄ծ ճշմարիտ, որ իջեր ՚ի յոր-
դանան և ՚ի վերնատունն, և լուսաւորե
ցեր զիս մկրտութե̄ ս̄բ աւազանին. մե-
ղայ յերկինս և առաջի քո. մաքրեա՛ զիս
վերստին ա̄ծային հրով քով՝ ո̄պ հրեղէն
լեզ



լեզուօք ս̄բ զառաքեալսն. և ողոր:
Անե՛ղ բնութի̄, մեղայ քեզ մտօք իմովք,
հոգւով և մարմնով իմով. մի՛ յիշեր զ
մեղս իմ զառաջինս՝ վ̄ն անուանդ քում
ս̄բյ. և ողորմեա՛ քո արա:
Տեսօ՛ղ ա̄մի, մեղայ քեզ խորհրդով բա-
նիւ և գործով. ջնջեա՛ զձեռագիր յան-
ցանաց իմոց, և գրեա՛ զանուն իմ ՚ի դպ-
րութե̄ կենաց. և ողորմեա՛ քո ա:
Քննո՛ղ գաղտնեաց, մեղայ քեզ՝ կամաւ և
ակամայ, գիտութե̄՝ և անգիտութե̄. թողութի̄
շնորհեա՛ մեղաւորիս. զի ՚ի ծննդենէ ս̄բ
աւազանին մինչև ցայսօր՝ մեղուցեալ եմ
առաջի ա̄ծութե̄դ քո զգայարանօք ի-
մովք, և ա̄մ անդամօք մարմնոյս. և ողոր:
Ամենախնամ տէր, դի՛ր պահապան աչաց
իմոց զերկիւղ քո ս̄բ՝ ո՛չ ևս հայիլ յա-
րատ, և ականջաց իմոց՝ ո՛չ ախորժել
լսել զբանս չարութե̄, և բերանոյ իմոյ՝ ո՛չ
խօսիլ զստութի̄, և սրտի իմոյ ո՛չ խորհիլ
զչարութի̄, և ձեռաց իմոց՝ ո՛չ գործել
զանիրաւութի̄, և ոտից իմոց՝ ո՛չ գնալ ՚ի
ճանապարհս անօրէնութե̄. այլ ուղղեա՛
զշարժումն սոցա լինել միշտ ըստ պատ-
ուիրանաց քոց յամենայնի. և ողոր:
Հո՛ւր կենդանի քո̄, զհուր սիրոյ քո՝
զոր



138

զոր արկեր յերկիր, քորքոքեա յանձն
իմ. զի այրեսցէ զաղտ հոգւոյ իմոյ, եւ
սրբեսցէ զխիղճ մտաց իմոց, եւ մաքրեսցէ
զմեղս մարմնոյ իմոյ, եւ վառեսցէ զլոյս
գիտութ՟ քո ’ի սրտի իմում. եւ ողոր։
Իմաստութի՟ Հօր յա՟. տուր ինձ իմաստութի՟
զբարիս խորհիլ՝ եւ խօսիլ՝ եւ գործել ա-
ռաջի քո յմ՟ ժամ. ’ի չար խորհրդոց՝ ’ի
բանից եւ ’ի գործոց փրկեա զիս. եւ ողոր։
Կամեցող բարեաց տր՟ կամարար, մի՛ թո-
ղուր զիս ’ի կամս անձին իմոյ գնալ. այլ
առաջնորդեա ինձ լինել միշտ ըստ կա-
մաց քոց բարեսիրաց. եւ ողոր։
Տէր երկնաւոր, տուր ինձ զարքայութի՟
քո, զոր խոստացար սիրելեաց քոց. եւ զօ-
րացո զսիրտ իմ ատել զմեղս, եւ սիրել
զքեզ միայն, եւ առնել զկամս քո. եւ
ողորմեա քո արա։
Խնամող արարածոց, պահեա նշանաւ
խաչի քո՝ զհոգի եւ զմարմին իմ, ’ի պատ-
րանաց մեղաց՝ ’ի փորձութե՟ց դիւաց, եւ
’ի մարդոց անիրաւաց, եւ յմ՟ վտանգից
հոգւոյ եւ մարմնոյ. եւ ողոր։
Պահապան ամե՟ քս՟, աջ քո հովանի լիցի
’ի վր՟ իմ, ’ի տուէ եւ ’ի գիշերի՝ ’ի նստիլ
’ի տան՝ ’ի գնալ ’ի ճանապարհ, ’ի ննջել
եւ



եւ ’ի յառնել. զի մի՛ երբէք սասանե-
ցայց. եւ ողորմեա քո արա։
Տր՟ իմ, որ բանաս զձեռն քո, եւ լնուս
զամ՟ արարածս ողորմութբ՟ քով. քեզ
յանձն առնեմ զանձն իմ. դու հոգա եւ
պատրաստեա զպէտս հոգւոյ եւ մարմնոյ
իմոյ՝ յայսմհետէ մինչեւ յաւիտեան. եւ
ողորմեա քո արա։
Դարձուցիչ մոլորելոց, դարձո զիս ’ի
չար սովորութե՟ց իմոց ’ի բարի սովորութի՟.
եւ բեւեռեա ’ի հոգի իմ զսոսկալի օր մա-
հուն, եւ զերկիւղ գեհենոյն, եւ զսէր ար-
քայութե՟ն. զի զղջացայց ’ի մեղաց, եւ գոր-
ծեցից զարդարութի՟. եւ ողոր։
Աղբիւր անմահութե՟, աղբերացո ’ի սրտէ
իմմէ զարտասուս ապաշխարութե՟՝ որպ՟
պոռնկին. զի լուացից զմեղս անձին իմոյ՝
յառաջ քան զելանելն իմ յաշխարհէս.
եւ ողորմեա քո արա։
Պարգեւիչ ողորմութե՟, պարգեւեա ինձ
ուղղափառ հաւատով, եւ բարի գործով.
եւ ընդ մարմնոյ եւ արեան քո հաղորդութբ՟
գալ առ քեզ. եւ ողոր։
Բարերար տր՟, հրեշտակի բարւոյ յանձն
արասցես զիս, քաղցրութբ՟ աւանդել
զհոգի իմ, եւ անխռով անցուցանել ընդ
չա



139

չարութ այսոցն, որք են 'ի ներքոյ երկնից · և ողորմեա՛ քո արա։

Լոյս ճշմարիտ Քս, արժանաւորեա՛ զհոգի իմ ուրախութ տեսանել զլոյս փառաց քոց 'ի կոչման աւուրն, և հանգչել յուսով բարեաց յօթեւանս արդարոց՝ մինչև յօր մեծի գալստեան քո · և ողոր։

Դատաւո՛ր արդար, յորժամ գաս փառօք հօր դատել զկենդանիս և զմեռեալս, մի՛ մտաներ 'ի դատաստան ընդ ծառայի քում · այլ փրկեա՛ զիս 'ի յաւիտենական հրոյն, և լսելի արա ինձ զերանաւէտ կոչումն արդարոց՝ յերկնից արքայութդ · և ողոր։

Ամենողո՛րմ տր՝ ողորմեա՛ ամ հաւատացելոց 'ի քեզ, իմոց և օտարաց՝ ծանօթից, և անծանօթից · կենդանեաց և մեռելոց · շնորհեա՛ և թշնամեաց իմոց և ատելեաց զթողութի՝ որ առ իս յանցանաց · և դարձո՛ զնս 'ի չարեացն, զոր ունին վս իմ · զի ողորմութե քում արժանի եղիցին · և ողոր։

Փառաւորեա՛լ տր, ընկա՛լ զաղաչանս ծառայիս քո · և կատարեա՛ 'ի բարի զխնդրուածս իմ · բարեխօսութ սրբուհւոյ ածածնին, և յովհաննու մկրտչին, և



և սբյն ստեփաննոսի նախավկային · և սբյն գրիգորի մերոյ լուսաւորչին · և սբց առաքելոց՝ և մարգարէից՝ և վարդապետաց՝ և մարտիրոսաց · և սբց հայրապետաց՝ և ճգնաւորաց՝ և կուսանաց, և ամ սբց քոց, երկնաւորաց՝ և երկրաւորաց։ Եւ քեզ փառք և երկրպագութի՝ անբաժանելի սբ երրորդութեդ՝ յաւիտեանս յաւիտենից · Ամէն։

Մաղթանք զօրաւորք՝ արհաւրոյ գիշերոյնոյ ·
Սբյն Գրիգորի Նարեկացւոյ ասացեալ։
Բան · ԺԲ։

Ընկա՛լ քաղցրութ՝ տէր ած հզօր, զդառնացողիս զաղաչանս · մատի՛ր գթութ՝ առ պատկառեալս դիմօք · փարատեա՛ ամենապարգև, զամօթականս ողխորութիս · բարձ յինէն՝ ողորմած, զանբերելի ծանրութիս · անջրպետեա՛ հնարաւոր, զմահացու կրթութիս · աւարեա՛ միշտ յաղթող, զխաբողին հաճութիս · բա ացադրեա՛ վերնային, զմոլելոյն մառախուղ · կնքեա՛ կեցուցիչ, զկորուսչին ընթացմունս · ցրուեա՛ ծածկատես, զըմբռնողին չար գործունս · խորտակեա՛ ան

քըն

քննին, զմարտողին դիմեցմունս ։ Տեառ-
նագրեա՛ քո անուամբդ՝ զլուսանցոյց երդ-
յարկիս․ պարփակեա՛ քո ձեռամբդ՝ զա-
ռաստաղ տաճարիս․ գծագրեա՛ քո ար-
եամբդ՝ զմուտ սեմոց սենեկիս․ կերպացո՛
զքո նշանդ՝ ՚ի հետս ելից մաղթողիս․
ամրացո՛ քո աջովդ՝ զհանգստենիս խշտի․
մաքրեսցես ՚ի հաղբից՝ զծածկարան ան-
կողնոյս․ պահեսցես քո կամօքդ՝ զտա-
ռապեալ անձն ոգւոյս․ անխարդախս ա-
րասցես՝ զքո շնորհեալ շունչ մարմնոյս․
կացուսցես շրջափակ՝ զպար զօրուդ
երկնայնոյ․ կարգեսցես ՚ի դիմի՝ ընդդէմ
դիւացն դասու ։ Տուր հանգիստ բերկ-
րութե̃ մահահանգոյնս նիրհման ՚ի խո-
րունե̃ գիշերիս, բարեխօսութ̃ հայցուա-
ծոց տե̃ր ա̃ծածնիդ՝ և ա̃մ ընտրելոց ։
Ամփոփեալ պարուրեա՛ զպատուհան աչ-
սութեց՝ զզգայարանացս իմաստից՝ ան-
զարհուրելի զետեղմամբ՝ ՚ի ծփական
խռովութեց, կենցաղական զբաղմանց,
անրջական երազոց, խոլականաց ցնորից,
յիշատակաւ քո յուսոյդ՝ անմխատելի
պաշտպանեալ ։ Եւ ըսթափեալ վերստին
՚ի նինջմանէ ծանրութե̃՝ ամենազգաստ
արթնութ̃, հոգենորոգ զուարթութ̃ ՚ի



քեզ արձանացեալ, զայս ձայն մաղթա-
նաց՝ բուրմամբ հաւատոց քեզ՝ ամեն-
օրհնեալ Թագաւոր փառաց անճառելից,
փառաբանողաց երկնագումար խմբից
երգակցեալ՝ յերկինս առաքել ։ Զի
դու փառաւորեալ ես յա̃մ արարածոց
յաւիտեանս յաւիտենից․ ամէն ։

Աղօթք զօրաւոր ։ Նորին սրբոյն Գրիգորի ։
Բան ․ ՂԴ ։

Ա̃ծ յաւիտենական․ բարերար և ա-
մենակալ․ ստեղծիչ լուսոյ, և յօ-
րինիչ գիշերոյ․ կեանք ՚ի մահու, և լոյս
՚ի խաւարի․ յոյս ակնունողաց, և եր-
կայնմտութ̃ տարակուսելոց, որ ամենար-
ուեստ իմաստութ̃ քո՝ դարձուցանես
յայգ զստուերս մահու, անմուա՛զ ծա-
գումն և անմուտ արեգակն, քանզի ոչ
զօրէ ծածկել զփառս տէրութ̃ քո խա-
ւար գիշերոյ ։ Որում կրկնի ծունր եր-
կրպագութ̃ ա̃մ եղելոց՝ երկնաւորաց և
երկրաւորաց, և սանդարամետականաց․
որ լսես զհեծութ̃ կապելոց, և հայիս յա-
ղօթս խոնարհաց, և ընդունիս զխնդրը-
ուածս նց̃․ ա̃ծ՛ իմ և Թագաւոր իմ․

կեանք իմ և ապաւէն իմ․ յոյս իմ և
վստահութիւն իմ․ յո՞ քո Աստուած իմ․ ո՞չ դ
հանգուցեալ 'ի հոգիս մեզ, մխիթարութ-
վշտաց՝ և քաւարան մեղուցելոց, որ գի-
տես զիմ յառաջ քան զլինել նոցա․ ա-
ռաքեա զպահպանողական զօրութիւն աջոյ
քո, և փրկեա զիս յերկիւղէ գիշերի և
'ի դիւէ չարէ ։ Որ զի զյիշատակ սու-
կալի և սուրբ քո անուանդ՝ միշտ համ-
բուրեալ շրթամբք հոգւոյ՝ ըղձութեան
ընչոյ, կեցից պահպանեալ ընդ այնոսիկ՝
որ կարդան զքեզ 'ի բոլոր սրտէ ։ Դու 'ի
դրոշմէ խաչի քոյ նշանիդ, զոր Աստուածային
արեամբ քո ներկեալ նորոգեցեր, և 'ի
նոյն շնորհ որդեգրութեան զմեզ մկրտեցեր,
և 'ի փառս պատկերի քո նկարեալ յօ-
րինեցեր այսու պարգևօք Աստուածականօք,
ամաչեսցէ սատանայ․ քակտեսցին մե-
քենայքն․ բարձցին որոգայթքն․ պար-
տեսցին մարտուցեալքն․ պակասեսցին
զէնքն սայրասուրք․ մերժեսցի մէգն․
փարատեսցի խաւարն․ մեկնեսցի մառա-
խուղն ։ Բազուկ քո հովանասցի, և աջ
քո կնքեսցէ․ վասն զի գթած ես և ողոր-
մած, և անուն քո կոչեցեալ է 'ի վերայ ծա-
ռայից քոց ։ Ընդ քեզ ընդ հօր՝ հոգւովդ-
սրբ



սրբով՝ փառք և իշխանութիւն յաւիտեանս
յաւիտենից․ ամէն ։

Աղօթք զօրաւոր ։ Նորին սրբոյն Գրիգորի ։
Բան․ խա ։

Որդի Աստուծոյ կենդանւոյ օրհնեալ յամենայնի,
հօրդ ահաւորի անքննելի ծնունդ․
որ տկարանայ առ 'ի քէն և ոչ ինչ ։ Որ
'ի ծագել անստուեր նշուլից՝ ողորմութե-
քո փառացդ, հալէին մեղք․ հալածին դևք․
ջնջին յանցանք․ խզին կապանք․ խորտա-
կին շղթայք․ կենդանանային մահա-
ցեալք․ բժշկին հարուածք․ ողջանան
վէրք․ բառնին ապականութիւնք․ տեղի տան
տխրութիւնք․ նահանջին հեծութիւնք․ փախնու
խաւարն․ մեկնի մէգն․ մերժի մառա-
խուղն․ փարատի մուայլն․ սպառի աղջա-
մուղջն․ վերանայ մութն․ գնայ գիշերն․
տարագրի տագնապն․ չքանան չարիքն․
հալածին յուսահատութիւնքն․ և թագա-
ւորէ ձեռն քո ամենակարող քաւիչդ ամենայնի ։
Որ ոչ եկիր կորուսանել զմարդկան ոգիս,
այլ կեցուցանել, թող ինձ զանթիւ չա-
րիսն իմ՝ բազում ողորմութեամբդ․ զի դու
միայն ես յերկնի անճառ, և յերկրի ան-
զըն

զննին. ՚ի տարր գոյի, և յեղլս ծագաց
ձի. սկիզբն ամի, և յամի. ամ լրմամբ
օրհնեալ ՚ի բարձունս. և քեզ ընդ հօր
և հոգւոյդ որդւոյ փառք՝ յաւիտեանս.
ամէն ։

---

Գովասանութ Սաղմոսացն Դաւթի։

Բանք սաղմոսիս՝ է պատուա կան.
լցեալ հոգւոյն՝ ածա կան.
և որք յասեն՝ յօժարա նան.
արքայութեն՝ արժանա նան։
Սաղմոսըն հաց՝ է երկնայ ին.
սեղան կազմեալ՝ մեծի դաւ թին.
որք ՚ի հացէս՝ այս կերակ րին.
աստուածային՝ սիրովն յա գին։
Սաղմոսըն գանձ՝ է անըս պառ.
այնմ որ ստանայ՝ մտօք պայ ծառ.
ըղձապատեր հոգւոյն՝ պահէ ՚ի վառ.
և մտանէ՝ ՚ի փառս ան ճառ։
Սաղմոսն աղբիւր՝ կենդանա րար.
մեղաց քաւիչ՝ և սրբա րար.
և որ ասէ՝ զսա մեղմա բար.
նա որդ հոգւոյն՝ լինի տա ճար։
Իսկ որք չասեն՝ և քուն լի նին.
և սաղմոսին՝ ոչ փափա գին.
յան



յանմահական՝ հացէն սո վին.
յաւուր մեծի՝ դատաստա նին։
Իսկ որք ասեն՝ զսա կիսա տուն.
վըճաս առնեն՝ իւրեանց հոգ ւոյն.
թէպէտ և կան՝ զգիշերն ար թուն.
դատարկ մընան՝ ՚ի որդ վար ձուն։
Իսկ որք ասեն՝ ծայրատե լով.
անմըտաբար՝ շաղփաղփե լով.
վայ է նոցա՝ պահեալ յո լով.
զի յաստուծոյ՝ են ամօ թով։
Իսկ որ ծայրատ՝ զսաղմոսն ա սէ.
և կիսատուն՝ յաւարտ ա ծէ.
նա յաստուծոյ՝ զամօթ կրես ցէ.
և ՚ի բարեացն՝ անմասն եղ ցէ։
Եղբայր իմ մեծ՝ դիր դու հոգ ւով.
տեսի տաճար՝ մի լի լու սով.
շինած կազմած՝ ութն անկիւ նով.
և աստիճանքն՝ իւր համա րով։
Վաթսուն ուչորս՝ ոսկի դրու նով.
հարիւր յիսուն՝ պատուհա նով.
առ նա կուսանք՝ ըն գան լա լով.
բոզքն և պոռնիկք՝ պարեն հոգ ւով։
Ով որ կամի՝ յօժար սըր տով.
խըմէ ըզնա՝ ոսկի թա սով.
ուրախանայ՝ ինքըն հոգ ւով.
յարքայութեան՝ ըն պարե լով։
Սւ

Եւթըն մախաղ՝ ես ու նէի ·
և ամէն մէկըն՝ ութ քըսա կի ·
որըն որ պիտէր՝ զայն բա նայի ·
նա ինձ բուրէր՝ հոտ կընդըր կի ։
Եւթ փարչ տեսի՝ կաթամբ լը ցած ·
գունով էին՝ քան զհուր վա ռած ·
յորոց արբի՝ ես անքօ տած ·
ոչ լիացայ՝ զերթ ծարա ւած ։
Ա ընտրհալի՝ մին աղիւ սակ ·
ունի հազար՝ լեառն ըսպի տակ ·
նոցա մաքիքն՝ են սևո րակ ·
իւրեանց հովիւքն՝ ոչ հրեշ տակ ։
Մօրն իւր արգանդ՝ էր սևայ ին ·
հօրըն բարակ՝ ամենև ին ·
որդիքըն սեաւ՝ ծընանէ ին ·
դաշտ յըստակ՝ բընակէ ին ։
Դաշտ մի արձակ՝ և պատու կան ·
լցեալ ծաղկօք՝ յոյժ զանա զան ·
ոչ յեղանակս՝ միայն գար նան ·
այլ անթառամ՝ ժամս ամե նայն ։



Ցանկ սաղմոսաց՝ ըստ կարգի այբուբենից ։

Աղաղակեցէք առ ած ամ երկիր · կե ։
Աղաղակեցէք առ տր ամ երկիր · ղթ ։
Ապրեցո զիս տր՝ զի նուազեաց ուր · ժա ։
Ապրեցո զիս տր 'ի մարդոյ չարէ · ճլթ ։
Առ գետս բաբելացւոց, անդ նստ · ճլզ ։
Առ քեզ տր կարդացի ած իմ, մի · իէ ։
Առ քեզ տր համբարձի զանձն իմ · իդ ։
Առ քեզ տր համբարձի զաչս իմ · ճիբ ։
Ասաց անզգամն 'ի սրտի իւրում · ժդ ։
Ասաց անզգամն 'ի սրտի իւրում · ծբ ։
Ասաց տր ցտր իմ, նիստ ընդ աջ · ճթ ։
Ասացի՝ թէ պահեցից զճանապարհս · լը ։
Ասէ անօրէնն 'ի մեղանչել ընդ միտս · լե ։
Ած ականջօք մերովք լուաք · խդ ։
Ած ած իմ, ես առ քեզ առաւօտ · կբ ։
Ած ած իմ՝ նայեաց առ իս ընդէ՞ր · իա ։
Ած աստուածոց տր խօսեցաւ, և կո · խթ ։
Ած եկաց 'ի ժողովս աստուածոց · ձա ։
Ած զիրաւունս քո արքայի տուր · հա ։
Ած մեր ապաւէն և զօրութի, օգնա · խե ։
Ած մերժեցեր և աւերեցեր զմեզ · ծթ ։
Ած՝ մինչև հեթանոսք 'ի ժառանգութի · հը ։
Ած յանուան քում կեցո զիս, և'ի · ծդ ։
Ած յօգնել ինձ նայեաց · և տր յըն · կթ ։
Ած



144

Ած ողորմեա՛ մեզ և օրհնեա՛ զմեզ․ կզ։
Ած ո՞ քեզ նմանիցի․ մի՛ լռեր և․ ձբ։
Ած վրէժխնդիր, Տր Ած՝ վրէժ․ ղգ։
Ած օրհնութե իմոյ մի՛ լռեր․ զի բե․ ճը։
Ահա օրհնեցէք Տն ծառայք․ ճլգ։
Բազում անգամ մարտեան ը իս․ ճիը։
Բայց միայն Այ հնազանդ լեր․ կա։
Բանից իմոց ունկն դիր Տր, և ՚ի․ ե։
Բարի է խոստովան լինիլ Տն․ ղա։
Բարձր առնեմ զքեզ Ած իմ․ ճխդ։
Բարձր առնեմ զքեզ Տր, զի ընկա․ իթ։
Բղխեաց սիրտ իմ զպատգամս․ խդ։
Գոհացայց զքեզ Տր բոլորով․ թ։
Գովեա՛ երուսաղէմ զՏր․ ճխէ։
Դատ արա ինձ Ած․ և իրաւ արա․ խբ։
Դատ արա ինձ Տր՝ զի ես յանմեղ․ իե։
Դատեա՛ Տր զայնոսիկ՝ որք դատին․ լդ։
Եթէ ոչ Տր էր առ մեզ, ասասս․ ճիգ։
Եթէ ոչ Տր շինէ զտունն, ՚ի նա․ ճիզ։
Եկա՛յք ցնծասցուք ՚ի Տր․ աղաղա․ ղդ։
Երանեալ են անբիծք ՚ի ճանապար․ ճժը։
Երանեալ է այր՝ որ երկնչի ՚ի Տնէ․ ճժա։
Երանեալ է այր որ ոչ գնաց ՚ի խոր․ ա։
Երանի ամցուն՝ որք երկնչին ՚ի Տնէ․ ճիէ։
Երանի որ խորհի զաղքատն և զտն․ խ։
Երանի՞, ում թողութի եղև մեղաց․ լա։


Եր

Երկինք պատմեն զփառս Այ․ ժը։
Զի՞ բարի կամ զի՞ վայելուչ, զի․ ճլբ։
Զի՞ պարծի ՚ի չարութե հզօր․ ծա։
Զողորմութիս քո Տր յաւիտեան․ ձը։
Ընդէ՞ր խռովեցան հեթանոսք․ և ժո․ բ։
Ընդէ՞ր մերժեցեր Ած իսպառ․ հգ։
Թէ արդարև զարդարութի խօսէիք․ ծէ։
Իբրև զի բարի է իէլի Ած․ հբ։
՚Ի դարձուցանել Տն զգերութի․ ճիե։
՚Ի խորոց կարդացի առ քեզ՝ Տր․ ճիթ։
՚Ի կարդալ իմում լուար ինձ Ած․ դ։
՚Ի նեղութե իմում ես առ Տր կար․ ճժթ։
՚Ի Տր յուսացայ․ որպ ասիցէք ցանձն․ ժ։
՚Ի քեզ Տր յուսացայ, մի՛ ամաչեցից յա․ լ։
՚Ի քեզ Տր յուսացայ, մի՛ ամաչեցից․ հ։
Լուարո՛ւք զայս ամ ազգք, ունկն․ խը։
Լուիցէ քեզ Տր յաւուր անձ․ ժթ։
Լո՛ւր Ած աղօթից իմոց յաղաչել․ կգ։
Լո՛ւր Ած աղօթից իմոց․ և նայեա՛ Տր․ կ։
Լո՛ւր Տ՛ր արդարութե․ և նայեա՛․ ժզ։
Խոնարհեցո՛ Տր զունկն քո՝ և լո՛ւր․ ձե։
Խոստովան եղերուք Տն՝ և կար․ ճդ։
Խստվան եղերուք Տն՝ զի բարի է․ ճժէ։
Խստվա՛ն եղերուք Տն․ զի բարի է․ ճլե։
Խստվա՛ն եղերուք Տն՝ զի քաղցր է․ ճզ։
Խստվա՛ն եղերո՛ւք Տն՝ զի քաղցր է․ ճե։


Խոս

Խոստովան եղէց քեզ տր բոլորով. ճլէ։
Խոստովա՛ն եղէց քեզ տր՝ բոլորով. ճժ։
Խոստովան եղիցուք առ քեզ ած. հդ։
Ծա՛փս հարէք տմ հեթանոսք, ա. խզ։
Կեցո՛ զիս ած, զի հասին ջուրք. կը։
Հաճեցար տր ընդ երկիր քո, և. ձդ։
Համբարձի զաչս իմ ՚ի լերինս, ուս. ճի։
Համբերելով համբերի տն, և նայե. լթ։
Հաւատացի զոր և խօսեցայ. և ես. ճժե։
Հիմունք նր ՚ի լեառն սբ նր. ձզ։
Ձայնիւ իմով ես առ տր կարդացի. հզ։
Ձայնիւ իմով ես առ տր կրդա. ճխա։
Մատուցէ՛ք տն որդիք այ. մա. իը։
Մեծ է տր, և օրհնեալ է յոյժ ՚ի. խէ։
Մի՛ նախանձիր ընդ չարս. և մի՛ ը. լզ։
Մինչև յե՞րբ տր՝ մոռանաս զիս. ժբ։
Յայտնի է ՚ի Հրէաստանի ած. և. հե։
Յարիցէ ած՝ և ցրուեսցին թշ. կէ։
Յելանելն իէլի յեգիպտոսէ. ճժգ։
Յիշեա՛ տր զդաւիթ, և զամ հե. ճլա։
Յողորմութի՝ և յիրաւունս օրհնե. ճ։
Նայեցարո՛ւք ժողովուրդք յօրէ. հէ։
Ողորմեա՛ ինձ ած, զի կոխեաց զիս. ծե։
Ողորմեա՛ ինձ ած՝ ողորմեա՛ ինձ. ծզ։
Ողորմեա՛ ինձ ած ըստ մեծի ողոր. ծ։
Ո՛ յուսայ ՚ի տր, որպ լեառն սիոն. ճիդ։



Որ բնակեալն է յօգնութի բարձրե. ղ։
Որ հովուեսդ իսրլի՝ նայեա՛ց, որ ա. հթ։
Որպ սիրելիք են յարկք քո տր զօ. ձգ։
Որպ փափագի եղջերու յաղբերս. խա։
Ո՛ւնկն դիր ած աղօթից իմոց. և. ծդ։
Ուրախ եղէ ես՝ որք ասէին ցիս. ճիա։
Պահեա՛ զիս ած իմ, զի ես ՚ի քեզ. ժե։
Պատրաստ է սիրտ իմ ած, պատ. ճէ։
Սիրեցի՝ զի լուիցէ տր զձայն. ճժդ։
Սիրեսցի զքեզ՝ տ՛ր զօրութի իմ. ժէ։
Տեառն է երկիր լրիւ իւրով. իգ։
Տր՝ ապաւէն եղեր մեր ազգէ. ձթ։
Տր ած իմ ՚ի քեզ յուսացայ, փրկեա՛. է։
Տր ած փրկութե իմոյ, ՚ի տուէ. ձէ։
Տր՝ զի բազում եղեն նեղիչք իմ. գ։
Տր թագաւորեաց, բարկացան ժողո. ղը։
Տր թագաւորեաց, վայելչութի զգե. ղբ։
Տր թագաւորեաց՝ ցնծասցէ՛ երկիր. ղզ։
Տր ՚ի զօրութե քում ուրա՛խ եղիցի. ի։
Տր լոյս իմ և կեանք իմ՝ ես յում. իզ։
Տր լո՛ւր աղօթից իմոց. ու՛նկն դիր. ճխբ։
Տր՝ լո՛ւր աղօթից իմոց. աղաղակ. ճա։
Տր կարդացի առ քեզ՝ և լո՛ւր ինձ. ճխ։
Տր հովուեսցէ զիս. և ինձ ինչ ոչ. իբ։
Տր մի՛ սրտմտութբ քով յանդիմաներ. լէ։
Տր՝ մի՛ սրտմտութբ քով յանդիմա. զ։

Տէր իմ բարձրացաւ սիրտ իմ. և ոչ. ՃԼ:
Տէր՝ ո՞վ կացցէ 'ի խորանի քում. ԺԴ:
Տէր տէր մեր, զի՞ սքանչելի է անուն. Ը:
Տէր փորձեցեր զիս՝ և ծանեար. ՃԼԸ:
Ցնծացէք առ Աստուած, օգնական է մեր. Ձ:
Ցնծացէք արդարք 'ի տէր՝ ուղղոց. ԼԲ:
Փրկեա զիս 'ի թշնամեաց իմոց Աստուած. ԾԸ:
Քեզ վայելէ օրհնութիւն Աստուած 'ի սի. ԿԴ:
Օրհնեա անձն իմ զտէր. տէր Աստուած իմ. ՃԳ:
Օրհնեա անձն զտէր, և ամ ոս. ՃԲ:
Օրհնեա անձն իմ զտէր. օրհնեցից. ՃԽԵ:
Օրհնեալ տէր Աստուած իմ. որ ուսոյց. ՃԽԳ:
Օրհնեցէք զանուն տն. օրհնեցէք. ՃԼԴ:
Օրհնեցէք զԱստուած 'ի սրբութեան նր. ՃԾ:
Օրհնեցէք զտէր ամ ազինք. ՃԺԶ:
Օրհնեցէք զտէր՝ զի բարի է սաղ. ՃԽԶ:
Օրհնեցէք զտէր յերկնից. օրհնե. ՃԽԸ:
Օրհնեցէք զտէր յօրհնութիւն նոր. զի. ՂԵ:
Օրհնեցէք զտէր յօրհնութիւն նոր. օրհ. ՂԷ:
Օրհնեցէք զտէր յօրհնութիւն նոր. ՃԽԹ:
Օրհնեցէք մանկունք զտէր. և օրհ. ՃԺԲ:
Օրհնեցից զտէր յամ ժամ, յամ. ԼԳ:

## ՕՐՀՆՈՒԹԻՒՆՔ:

Որդ՝ արձակեա զծառայս քո տէր. 306:
Ես ասացի 'ի վերանալ յինէն. 223:



Օր

Օ՜ հզօր բորբոքեց[illegible]. 1[illegible]
'Ի գիշերաց կանխէ [illegible] իմ առ. 18[illegible]
'Ի նեղութեան իմում ես առ տէր կար. 260
Հաստատեցաւ սիրտ իմ 'ի տէր, և. 146:
Մեծացուսցէ անձն իմ զտէր. և ցն. 304:
Նայեցարուք երկինք, և խօսեցայց. 67:
Տէր զլուր քո լուայ՝ և երկեայ. 292:
Տէր ամենակալ Աստուած աբրահամու. 306:
Փոքր էի ես յեղբարս իմ, և կրտ. 298:
Օրհնեալ ես տէր Աստուած հարցն մե. 300:
Օրհնեալ տէր Աստուած իէլի, որ յայցել. 305:
Օրհնեսցուք զտէր, զի փառօք է. 29:
Օրհնեցէք զԱստուած յօրհնութիւն նոր. 259:

## Եօթն Սաղմոսք՝ Ապաշխարութեան:

Տէր՝ մի՛ սրտմտութեամբ քով յանդիմա. Զ:
Երանի՞, ուոց թողութիւն եղև մեղաց. ԼԱ:
Տէր մի սրտմտութեամբ քով յանդիմաներ. ԼԷ:
Ողորմեա ինձ Աստուած ըստ մեծի ողոր. Ծ:
Տէր՝ լուր աղօթից իմոց. աղաղակ. ՃԱ:
'Ի խորոց կարդացի առ քեզ. ՃԻԹ:
Տէր՝ լուր աղօթից իմոց. ուն. ՃԽԲ:



ՄՄ Հայագիտական գրադարան
MAL045292